ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№ 1216-Ա/2 «28» հուլիսի, 2021 թ.

ԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի N 1071-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 4-րդ գլխի 19-րդ մասի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի 22-Ի N 1178-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2021 թվականի հուլիսի 27-ին կայացած նիստի արձանագրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գիտական ծրագրերի ինտեգրմանն աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից ներկայացված ծրագիրը՝ գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացման կենտրոնի ստեղծման նպատակով:
2. Կենտրոնի ֆինանսավորումը սկսել 2021 թվականի օգոստոսից:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

/պաշտոնակատար/